ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2025 թվականի N 785-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԴՈԼԱՐԵՍ ՍԵՐՅՈԺԱՅԻ, ԳՈՀԱՐ ՍԼԱՎԻԿԻ, ԱՐՍԵՆ ՍԼԱՎԻԿԻ, ՄԱՆԵ, ՄԱՐԻՆԵ, ՆԱՐԻՆԵ ԵՎ ՄԵՐԻ ՄԻՍԱԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆՆԵՐԻՆ ՈՒ ԳԵՂԵՑԻԿ ԱՐԱՄԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի 7-րդ փողոց, 20 հասցեում գտնվող՝ բաժնային սեփականության իրավունքով քաղաքացիներ՝ Դոլարես Սերյոժայի, Գոհար Սլավիկի, Արսեն Սլավիկի, Մանե, Մարինե, Նարինե և Մերի Միսակի Առաքելյաններին ու Գեղեցիկ Արամի Մխիթարյանին պատկանող 08-004-0020-0049 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության օրինական հողամասին կից առկա է ավելի օգտագործվող 300 քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի նկատմամբ իրենց սեփականության իրավունքները ճանաչելու խնդրանքով քաղաքացիները դիմել են Ախուրյան համայնքի ղեկավարին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, դրա օգտագործումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով ըստ օրենքի

ժառանգության իրավունքի թիվ 787-20240305-84-7751483, 787-20240305-84-7752170, 787-20240305-84-7752182 վկայագրերը՝ որոշում եմ.

1. Ճանաչել քաղաքացիներ Դոլարես Սերյոժայի Առաքելյանի (ծնված 1951 թվականի հունիսի 28-ին) 19/36 բաժնեմասով, Գոհար Սլավիկի Առաքելյանի (ծնված 1972 թվականի փետրվարի 15-ին) 6/36 բաժնեմասով, Արսեն Սլավիկի Առաքելյանի (ծնված 1973 թվականի հունիսի 29-ին) 6/36 բաժնեմասով, Մանե Միսակի Առաքելյանի (ծնված 2011 թվականի նոյեմբերի 7-ին) 1/36 բաժնեմասով, Մարինե Միսակի Առաքելյանի (ծնված 2008 թվականի փետրվարի 17-ին) 1/36 բաժնեմասով, Նարինե Միսակի Առաքելյանի (ծնված 2009 թվականի հոկտեմբերի 8-ին) 1/36 բաժնեմասով, Մերի Միսակի Առաքելյանի (ծնված 2015 թվականի հունիսի 28-ին) 1/36 բաժնեմասով ու Գեղեցիկ Արամի Մխիթարյանի (ծնված 1988 թվականի մարտի 7-ին) 1/36 բաժնեմասով բաժնային սեփականության իրավունքները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի 7-րդ փողոց, 20 հասցեում գտնվող բնակելի տան սպասարկման թիվ 08-004-0020-0049 կադաստրային ծածկագրով, 0,09 հեկտար մակերեսով օրինական հողամասին կից ավելի օգտագործվող 0,03 հեկտար մակերեսով ավելի օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ, որն արտացոլված է որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված և կադաստրի կոմիտեում թիվ 2025PMK8PZ ծածկագրով մուտքագրված հողամասի հատակագծում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում գույքի իրավատերեր՝ Դոլարես Սերյոժայի, Արսեն Սլավիկի, Մանե Միսակի, Մարինե Միսակի, Նարինե Միսակի, Մերի Միսակի Առաքելյաններին ու Գեղեցիկ Արամի Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«10» հուլիսի 2025 թվական
գյուղ Ախուրյան

Digitally signed by
MANUKYAN ZAVEN 321484011
Date: 2025-07-10 16:38:47